

Քիւրդները չը նայած իրենց ազիտութեան, ու ցեղապետներին ունեցած կոյր հնազանդութեանը, երբեմն ցեղապետներու հարստահարութեանց հետ, կը վայելն նաև անոնց բարիքը:

Քիւրդ ցեղապետները միշտ արթուն էին. իրենց վայելած դիրքի շնորհիւ, միշտ տեղեակ կը մնային քաղաքական աշխարհի անց ու դարձին, ու յարմար պարագան բերելուն պէս, իրենց սուրը կը քաշէին թէ տիրողի ճիրաններէն դուրս գալու, և թէ «Ֆրլա» համարածներէն իրենց վրէժը լուծելու:

սակար տարր մը միայն կրնային լինել. սպառնացող վտանգին առաջն առնելու համար՝ Դուռը Քիւրդներուն ամեն կերպ սղատութիւն տուաւ Հայերու դէմ, և անոնց իշխանութիւն տուաւ Հայոց երկիրները իրենց սեփականացնելու որպէսզի այս կերպով Քիւրդները նստակեաց դարձնէ:

Իրենց թափառական կեանքին մէջ այս սահմանափակմամբ վտանգուած Քիւրդները, լուս հասկցան այդ հրամանէն օգտուել: Պէտք էին և կուզէին ալ ապրի՛լ:

Եթէ փորձէին թիւրքները կողոպտելու, ՚ի հարկին՝ այս վերջիններուն զինեալ դիմադրութեանը կը հանդիպէին, և սուլթանին սուլիններուն կը բաղիւէին: Եթէ Հայերը կողոպտէին, կուսավարութեան կողմէ ոչ միայն ուէ արգելքի չէին հանդիպեր, այլ ընդհակառակն, անկէ քաջալերութիւն և օգնութիւն կը գտնէին:

Ասկէ կը հետեւի որ. Յեղուկան աջուրիւնը չէ, կրօնական մոլեռանդութիւնը չէ, որ Քիւրդներ կը դրդէ Հայերը կոտորելու եւ կողոպտելու:

Ազգային այլազանութեան վրայ շատ շնչին գաղափար մ'ունին, և իրենց պաշտօնապէս դաւանած Մահմետական կրօնին վրայ կարծես թէ և ոչ մէկ գաղափար ունենան:

Աշխարհիս մէջ հողիւ թէ կորելի լինի քրդականին պէս, աշխարհէ օտարացած երկրորդ ցեղ մը գտնել:

Հայերու հանդէպ իրենց բարբարոսական յարաբերութիւններուն միակ պատճառը հետեւեալն է:

Դուան համար անհրաժեշտ կարեւորութիւն ունէր՝ անող բաժանմամբ եւ զարբականութիւններով իրենց զոյութեան մէջ վստակուած Քիւրդերուն ու եւ վնասուց հասուցումն ընել, անոր համար անգլին ու անպաշտպան հայերը զոհուեցան:

Թիւրք կառավարութեան և Քիւրդերու միջև կնքուած այս կերպ բարեկամութիւնը շատ անվստահելի էր, և թէ քիւրդները երբեմն Տաճկաստանի թշնամիներուն հետ միանալու գաղափարը երբէք մէկդի թողած չէին: